ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<<25>> <<հուլիսի>>2011թ
ք. Եղեգնաձոր

N 29

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԳԼԽԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ - 728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 14-ի N 20 հրամանը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Քարագլխի գյուղապետարանում 2010 թվականի և 2011 թվականի 6 ամիսների ֆինանսատնտեսագիտական գործունեության ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ /համաձայն հավելվածի/:
2.Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել Քարագլխի համայնքի ղեկավարին, աշխատակազի քարտուղարին, ֆինանսիստին, հաշվապահին՝ անհրաժեշտության դեպքում մյուս մասնագետներին:
3.Ստուգման ընթացքում առանձնակի անդրադառնալ համայնքի ղեկավարի և ավագանու սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացմանը:
4.Ստուգման ժամկետը սահմանել 3 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2011 թվականի հուլիսի 25 -ին և ավարտել 2011 թվականի հուլիսի 27-ին:

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2011 թվականի
Հուլիսի 25-ի N կարգադրության

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Քարագլխի գյուղապետարանում ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը.

1. Ռազմիկ Հայրապետյան -ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
2. Վասակ Կարապետյան -ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
3. Արամ Գրիգորյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
4. Նորայր Սիմոնյան -ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ
5. Աղվան Հարությունյան --ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով- վարչության առաջատար մասնագետ
6. Մեսրոպ Մեսրոպյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար **Ս.Ադամյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ք. ԵՂԵԳՆԱՁՈՐ

«01» հունվար 2011թ. N 23

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի <<Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին>> № 626-Ն որոշման 9-րդ կետով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել ավարտված շինարարական օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն № 1 հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ԲԱԳՐԱՏՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2011թ. հոկտեմբերի 1-ի թիվ 23 կարգադրության

Ավարտված շինարարական օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովի անհատական կազմը

Ա. Հովսեփյան - Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ):

Ռ.Մինասյան - Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ):

Հանձնաժողովին մասնակից դարձնել՝

1. ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետին:
2. Կապալառու կազմակերպության ղեկավարին:
3. Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության ներկայացուցչին:
4. Հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության ներկայացուցչին:
5. Օբյեկտը շահագործող կազմակերպության ղեկավարին:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար — **Ս. Ադամյան**